



Համատեղ բնակելի հաստատություններում լողավազանների վերաբացման մասին արձանագրությունները

Վերջին թարմացումները՝

11/28/20.

- Բացօթյա լողավազանները, որոնք սպասարկում են մեկից ավելի տնային տնտեսությունների, կարող են բացվել միայն կարգավորվող լողի համար, երբ մի շարքում լողում է միայն մեկ լողորդ՝ համաձայն Առողջապահության Պատասխանատուի՝ COVID-19-ի Վերահսկմանն Ուղղված՝ «Ժամանակավոր, Թիրախավորված՝ Ավելի Անվտանգ է Տանը» Հրամանի: Այս ժամանակավոր ժամանակահատվածում դադարեցվում են բացօթյա լողավազանների բոլոր այլ գործողությունները՝ հանգստի լող, լողի դասընթացներ, ընտանեկան լող և այլն:
- Հստակեցվում է, որ ստուգումը պետք է ներառի պարզաբանում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտական և հանրային առողջապահական փորձաքննության վրա հիմնված փուլային մոտեցում, որը համընկնում է Կալիֆոռնիայի ճանապարհային քարտեզի հետ՝ թույլ տալու այն լողավազանների ավելի անվտանգ վերաբացելն ու դրանցից օգտվելը, որոնք գտնվում են բնակարանների, շենքերի և տան սեփականատերերի միությունների տարածքներում:

Բացօթյա լողավազանները, որոնք սպասարկում են մեկից ավելի տնային տնտեսությունների, կարող են բացվել միայն կարգավորվող լողի համար, երբ մի շարքում լողում է միայն մեկ լողորդ՝ համաձայն Առողջապահության Պատասխանատուի՝ COVID-19-ի Վերահսկմանն Ուղղված՝ «Ժամանակավոր, Թիրախավորված՝ Ավելի Անվտանգ է Տանը» Հրամանի, որն ուժի մեջ է 2020 թվականի նոյեմբերի 30-ի ժամը 12:01-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ի ժամը 23:59: Բնակելի հաստատությունների փակ լողավազանները մնում են փակ:

Սույն ուղեցույցում ընդգրկված լողավազանների բոլոր շահագործողները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու ցանկացած չիրականացված միջոցառումը կիրառելի չէ:

Խնդրում ենք նկատի ունենալ. այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ ինֆորմացիայի և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է.

- (1) Աշխատավայրերի քաղաքականություններ և գործելակերպեր՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը:
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ:



- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ:
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն:
- (5) Խիստ կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության միջոցառումներ:

Պետք է անդրադառնալ այս հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակի վերաբացման արձանագրություններ:

Այս ուղեցույցում ընդգրկված բնակելի հաստատությունների լողավազանների բոլոր շահագործողները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անուն՝ _____

Հաստատության հասցե՝ _____

Փակցնելու ամսաթիվը՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԴՐՈՒՑԹՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Նշեք այս կետը, եթե հաստատությունում/սեփականությունում չկան աշխատողներ: *Սնդեք B Բաժնին:*
- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց պարտականությունները կատարել տնից, պետք է հանձնարարվի անել այդպես:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և խրոնիկական հիվանդություններ ունեցող) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- Բոլոր աշխատակիցներին հրահանգվել է հիվանդ ժամանակ չգնալ աշխատանքի և հետևել DPH-ի ինքնամեկուսացման ուղեցույցին, եթե կիրառելի է:
 - o Ստեղծել վերապատրաստված փոխարինող աշխատողների ցուցակ:
 - o Աշխատակիցներին տրամադրվել է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների վերաբերյալ, որն աշխատողը հնարավոր է իրավունք կունենա ստանալ, ինչն էլ ֆինանսապես ավելի հեշտ կդարձնի նրա տանը մնալը: Տե՛ս հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման [ծրագրերի](#)՝ ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Ընտանիքների Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի Օրենքի](#) ներքո, և աշխատակիցների համար աշխատողների փոխհատուցման վճարներ ստանալու իրավասության և մարտի 19-ից մինչև հուլիսի 5 ընկած ժամանակահատվածում COVID-19-ին առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր Կարգի](#):
- Եթե տեղեկանում եք, որ մեկ կամ ավելի աշխատակիցներ COVID-19 դրական են թեստավորվել, կամ COVID-19-ին համապատասխան ախտանիշեր ունեն, գործատուն ունի մշակված ծրագիր



կամ արձանագրություններ՝ տանը այդ անձին(անց) մեկուսացնելու և պահանջելու անհապաղ ինքնամեկուսանալ բոլոր այն աշխատակիցներին, ովքեր աշխատավայրում շփվել են այդ անձի(անց) հետ: Գործատուի ծրագրով պետք է նախատեսվի արձանագրություն՝ կարանտինում գտնվող բոլոր աշխատակիցներին հնարավորություն տալու COVID-19 թեստավորելու վերաբերյալ, որպեսզի պարզվի, թե արդյոք եղել են աշխատավայրում այլ վարակվածներ, որը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:

- Իրականացվում են [աշխատակիցների ստուգումներ](#), նախքան աշխատակիցներին կյոնյալատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, **ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:** Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատական՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Աշխատավայրի ներսում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի հաստատված դեպքերի պարագայում, գործատուն պետք է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնի այս խմբի մասին՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներին: Եթե բռնկումը հայտնաբերվում է աշխատանքային վայրում, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը մեկնարկում է բռնկման արձագանքելու քայլեր, ինչը ներառում է վարակի դեմ պայքարի ցուցումների և առաջարկների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկողության միջոցառումներ: Հանրային առողջապահության կառավարիչը կստանձնի բռնկման հետաքննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքնի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձև են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ պինդ միջնապատերով առանձնացված աշխատախցում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը՝ կանգնած վիճակում:
- Աշխատակիցներին հանձնարարվում է իրենց դիմակները ամեն օր լվանալ կամ փոխարինել նորով:
- Աշխատակիցներից չի պահանջվում ջուրը մտնելիս կտորե դիմակ կրել:**
- Հերթափոխերը փոփոխվել կամ տեղաշարժվել են՝ սահմանափակելու ջրային հաստատությունում միաժամանակ ներկա գտնվող աշխատակիցների քանակը:
- Ընդմիջումների ժամերը տատանվում են, որպեսզի ընդմիջման սենյակներում աշխատակիցների միջև հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն ամբողջ ընթացքում:
- Աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել աշխատավայրում ցանկացած տեղ՝ բացի նախատեսված ընդմիջման սենյակներից, որպեսզի համոզվեք, որ դիմակները հետևողական և ճիշտ են կիրառվում:
- Ախտահանիչները և հարակից նյութերը տրամադրված են աշխատակիցներին հետևյալ վայր(եր)



ում:

- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոց տրամադրվում է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում:
- Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ՝ ձեռքերը լվանալու համար:
- Այս արձանագրության պատճենը տրվել է յուրաքանչյուր աշխատակցի:
- Այս ստուգաթերթում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացառությամբ նրանց, որոնք վերաբերվում են աշխատանքի պայմաններին, կիրառելի են առաքման աշխատակազմի և ցանկացած այլ ընկերության համար, որոնք կարող են այդ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Ընտրովի — Նկարագրեք այլ միջոցառումներ.

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- 2020 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը բնակելի տարածքների լողավազանները կարող են օգտագործվել միայն կարգավորվող լողի համար, երբ մի շարքում լողում է միայն մեկ լողորդ: Սահմանափակեք լողավազանի օգտագործումը, ապահովելու, որ լողավազանից օգտվողները կարողանան 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել այն անձանցից, որոնց հետ միասին չեն ապրում, կամ մինչև լողավազանի տարողության 50%-ով, որը որ ավելի քիչ է:
 - Նշեք լողավազանի ներկա տարողությունը (օգտվողների առավելագույն թիվը). _____ Նշեք լողավազանի տարողության 50%-ը. _____
 - Տեղեկացրեք բոլոր բնակվող տնային տնտեսություններին լողավազանից օգտվողների քանակի սահմանափակման վերաբերյալ:
 - Լողավազանից օգտվելու համար ցանկալի է կիրառել ամրագրման համակարգ: Օրինակ՝ սա կարող է ներառել ամբողջ լողագոտու ամրագրումը՝ անհատական լողի համար և կես լողագոտիները՝ տնային տնտեսության օգտագործման համար:
 - Լողավազանի երկարությամբ լողացողները պետք է 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն այն մարդկանցից, ում հետ չեն ապրում: Հնարավոր է անհրաժեշտ լինի ցանկացած պահի սահմանափակել լողորդների թիվը, ովքեր լողում են լողավազանի երկարությամբ:
- Փակեք սպան/ջակուզին, կամ սահմանափակեք սպայի/ջակուզիի միաժամանակ օգտագործումը՝ թույլատրելով միայն 1 մարդու կամ ընտանիքի անդամներ:
- Լողավազաններում ջրային սահահարթակները, նավարկություններն ու այլ ջրային ատրակցիոնները պետք է փակ լինեն:
- Եթե փրկարարը հերթապահության մեջ է, նրանից չի պահանջվում վերահսկել ուրիշների ձեռքերը լվանալը, դեմքի կտորե ծածկող միջոց կրելը կամ մյուսներից սոցիալական հեռավորություն պահպանելը:
- Խորհուրդ է տրվում, որ նշանակված անձը կամ բնակիչների խումբը պատասխանատու լինի վերահսկելու և ապահովելու, որ լողավազանից օգտվողների թիվը չի գերազանցում վերոնշյալ



պայմաններին: Նշանակված անձը պետք է հետևի նաև, որ պահպանվեն բոլոր միջանկյալ ուղեցույցները:

- Միջոցառումներ՝ ապահովելու սոցիալական հեռավորության (անհատները կարող են առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել այն մարդկանցից, ում հետ չեն ապրում) պահպանումը:
 - Փոփոխեք տախտակամածի և լողավազանի շուրջը գտնվող այլ տարածքների դասավորությունը՝ ապահովելու, որ կանգնելու և նստելու տարածքներում հնարավոր լինի պահպանել ֆիզիկական հեռավորության պահանջները, միաժամանակ պահպանելով 4 ոտնաչափ անվտանգ հեռավորություն լողավազանի շուրջը, ինչպես պահանջվում է Նահանգային օրենքով: Մա կարող է ներառել՝ աթոռները հեռացնելը, կամ որոշ տարածքների ժապավենով փակելը, որպեսզի դրանցից չօգտվեն:
 - Տրամադրեք ֆիզիկական հուշումներ կամ ուղեցույցներ (օրինակ՝ ջրի մեջ շարքերի գծեր, կամ սեղաններ և աթոռներ՝ տախտակամածի վրա)՝ ապահովելու, որ և ջրում, և ջրից դուրս բնակիչներն ու լողացողները միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն:
- Արգելեք հյուրերին օգտվել լողավազանի տարածքից, որոնք չեն ապրում բնակարաններում կամ տան սեփականատերերի ասոցիացիայի անդամ չեն:
- Արգելեք խնջույքներն ու հավաքույթները բոլոր ընդհանուր տարածքներում, ներառյալ՝ լողավազանում:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում են, որ հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է դեմքի ծածկոցներ կրել (բացառությամբ՝ ջրում գտնվելիս): Մա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից:
- Իրականացվում է այցելուների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, **ինչպես նաև պարզաբանում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո:** Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար անհատապես, կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված **նշաններով**, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- Իրականացրեք լողավազանի անվտանգության ստուգում՝ համոզվելու, որ լողավազանի քիմիական բաղադրությունը բավարար է ախտահանման համար, և որ լողավազանը գնահատվել է անվտանգության սարքավորումների առումով:
 - Ճիշտ շահագործումը և սպասարկումը պետք է ոչնչացնեն վիրուսը ջրի մեջ:
- Այն հաստատությունների համար, որոնք չեն շահագործվել, նախքան վերաբացելը հինգ րոպե բաց թողեք տաք և սառը ջրի փականները՝ հաստատության ջրամատակարարման համակարգում հավաքված հին ջուրը նոր և անվտանգ ջրով փոխարինելու համար: Մա ներառում է, բայց չի սահմանափակվում միայն խմելու ցայտադրյուններով, դեկորատիվ շատրվաններով, տաք բաղնիքներով և այլն:
- Հաճախակի հպման մակերեսների և ընդհանուր օգտագործման իրերի համար կիրառեք մաքրման և ախտահանման ծրագիր՝ ամեն անգամ, երբ դրանք օգտագործվում են: Օգտագործեք EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ: Հետևյալ պարագաները և տարածքները հաճախակի մաքրվելու և ախտահանվելու են՝ հետևյալ ժամանակացույցով.



- Բազրիքները և անվասայլակների թեքությունները _____
 - Աթոռները և սեղանների երեսները _____
 - Դռների բռնակները և պետքարանների մակերեսները, ձեռքերը լվանալու կայանները, տակդիրները փոխելու կայանները և ցնցուղները _____
 - Ընդհանուր օգտագործման տարածքներ _____
 - Պետքարաններ _____
 - Այլ _____
- Տրամադրեք բավարար քանակով պարագաներ՝ առողջ հիգիենա ապահովելու համար: Այդ պարագաները ներառում են՝ օձառ, առնվազն 60% սպիրտային հիմքով ձեռքի ախտահանիչ միջոց, թղթե սրբիչներ, անձեռոցիկներ և աղբամաններ, որոնցից բնակիչները կարող են օգտվել:
- Եթե չի հեռացվել, ապահովեք, որ կահույքը (օրինակ՝ աթոռները) կամ այլ հաճախակի օգտագործվող իրերը, մաքրվում և ախտահանվում են օգտագործումների միջև: Բնակիչները կարող են բերել պարագաներ, որպեսզի ախտահանեն կահույքը և հաճախակի օգտագործվող իրերը՝ իրենց օգտագործելուց հետո: Խորհուրդ է տրվում, որ բնակիչներն իրենց հետ բերեն իրենց սեփական կահույքը կամ հաճախակի օգտագործվող իրերը:
- Մարդիկ պետք է լողավազան բերեն իրենց անձնական սրբիչները և չպետք է համատեղ օգտագործեն դրանք իրենց ընտանիքի անդամ չհանդիսացող մարդկանց հետ:
- Լողավազանի տախտակամածին չի կարելի սնունդ կամ խմիչքներ բաժանել ուրիշներին, և ընտանիքի անդամները չեն կարող որևէ սննդից կամ խմիչքից օգտվել ընտանիքի անդամ չհանդիսացող մարդկանց հետ, որպեսզի նվազեցվի վարակի փոխանցման վտանգը:
- Ցայտադրյուրներն ու ջրի սառեցնող հարմարանքները անջատված են և չեն կարող օգտագործվել:
- Համոզվեք, որ փակ տարածքների օդափոխման համակարգերը պատշաճ կերպով աշխատում են:
- Հնարավորինս ավելացրեք դրսի օդի հոսքը ներս և շրջապատյուր՝ բացելով պատուհանները և դռները՝ օգտագործելով օդամղիչներ և այլ մեթոդներ: Դիտարկեք օդը մաքրող բարձր արդյունավետությամբ շարժական սարքերի տեղադրումը, շենքի օդային զտիչների արդյունավետության հնարավորինս բարձրացումը և այլ փոփոխությունները՝ բոլոր աշխատանքային տարածքներում դրսի օդի հոսքի և օդափոխության բարելավման համար:
 - Սակայն, մի բացեք պատուհանները և դռները, եթե դա անելը վտանգ է ներկայացնում անձնակազմի, բնակիչների կամ լողացողների համար:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճենը փակցված է ջրավազանի բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Լողավազանի բոլոր հանրային մուտքերի մոտ նշաններ են փակցված՝ տեղեկացնելու լողավազանից օգտվողներին տանը մնալ, եթե հիվանդ են, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշեր ունեն:
- Նշաններ են փակցված, որոնք լողավազանից օգտվողներին հիշեցնում են, հնարավորության



դեպքում, 6 ոտնաչափ սոցիալական հեռավորություն պահպանել ընտանիքի անդամ չհանդիսացող մարդկանցից:

- Եթե բաց են, սպայի/ջակուզիի նշաններ, որոնք սահմանափակում են դրանց միաժամանակ օգտագործումը՝ թույլատրելով միայն մեկ մարդ կամ մեկ ընտանիք:
- Նշաններ, որոնք խրախուսում են բոլոր բնակիչներին և լողացողներին լողավազանի տարածք մուտք գործելիս հաճախ ձեռքերը լվանալ կամ օգտագործել ձեռքերի ախտահանիչ միջոց: Տրամադրեք, կամ բնակիչներին պահանջեք բերել 60% սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Նշաններ, որոնք բնակիչներին հիշեցնում են կրել դեմքի ծածկող միջոցներ, երբ շրջում են ընդհանուր տարածքներում, դեպի լողավազան և հետ և օգտվում են ընդհանուր պետքարաններից: ***Հիշեցրեք լողացողներին ջուրը մտնելիս հանել դեմքի կտորե ծածկող միջոցները:***

E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժման սահմանափակումներ ունեցող և/կամ հանրային վայրերում բարձր ռիսկի տակ գտնվող բնակիչների համար ապահովվի լողավազանից օգտվելու հնարավորությունը:

Սոցիալական հեռավորության և հաստատությունների/մակերեսների ախտահանման ընթացակարգերի վերաբերյալ ցուցումներ կարող եք ձեռք բերել նաև Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններից՝ հետևյալ հղումով <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/php/water.html>: